

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/2

2 հուլիսի 2013 թ.

Քննարկվեց «ԷՖ Հինգ» ՍՊԸ 29.05.2013 թ-ի դիմում-գանգատը «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ կողմից դրևորված անգործության վերաբերյալ:

«ԷՖ Հինգ» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

«ԿԱ ՊԵԿ նախագահի 22.07.2011 թ-ի թիվ 1000789 հանձնարարագրի հիմքով «ԷՖ Հինգ» ՍՊԸ-ում «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 4-րդ վարչության կողմից կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից «Օրենսդրության առանձին պահանջների ստուգում: Արդյունքում 20.08.2011 թ-ին կազմվել է թիվ 1000789 ստուգման ակտը, որով ընկերությանն առաջադրվել է 1.153.140 դրամի չափով լրացուցիչ հարկային պարտավորություն:

Ընկերությունը նույն օրը՝ 20.08.2011 թ-ն, «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ է ներկայացրել դիմում, որով «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» «Օրենքի հիմքով խնդրել է կնքել պարտավորությունների մարման ժամանակացույց:

Նշվածի հիմքով «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ-ի կողմից 20.08.2011 թ-ին կազմվել է ժամանակացույց, որը հաստատվում է կողմերի կողմից:

Ընկերությունն ամբողջությամբ և սահմանված ժամկետում մարել է ժամանակացույցով ստանձնած պարտավորությունը, որի հիմքով ընկերությունն իր անունից «ԿԱ ՊԵԿ նախագահին, «ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալին և «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ-ի պետին է հասցեագրել բազում նամակներ՝ խնդրելով կատարել օրենսդրական պահանջը և «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ-ի տվյալների մշակման և հաշվառման բաժնում ընկերության վերաբերյալ հաշվառման քարտերից դուրս գրել 422.614 դրամ օրենքով զիջվող գումարը, այդ թվում՝ շահութահարկի գծով 399.674 դրամ և ԱԱՀ-ի գծով 22.940 դրամ:

Ընկերության պահանջը հիմնավորվում է «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 4-րդ վարչության կողմից 20.08.2011 թ-ին կազմված թիվ 1000789 ստուգման ակտի ԱԱՀ-ին և շահութահարկին վերաբերող նկարագրական մասերով, համաձայն որոնց զիջման ենթակա գումարը՝ տույժերն արձանագրվել են մինչև 31.12.2009 թ-ը:

«ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի գրությամբ խնդրի լուծման համար առաջարկվել է դիմել «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ, որպիսի պահանջն ընկերության կողմից կատարվել է, և որին մինչ օրս չի տրվել համապատասխան ընթացք:

Ընկերությունն օգտվելով «Սահմանադրությամբ իրեն վերապահված իրավունքներից, 18.04.2013 թ-ի դիմումով ուղղված «ԿԱ ՊԵԿ նախագահին և Արաբկիրի ՀՏ պետին ևս մեկ անգամ խնդրել է կատարել «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» «Օրենքով սահմանված իմպերատիվ պահանջը և ընկերության հաշվառման քարտերից դուրս գրել զիջվող 422.614 դրամ գումարը:

«ԿԱ ՊԵԿ և դրա ստորաբաժանումները՝ որպես պետական գերատեսչական մարմիններ պարտավոր են գործել «Սահմանադրության 5-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 36-րդ, 37-րդ և 46-րդ հոդվածներով՝ անձի կողմից ներկայացված դիմումին տալ համապատասխան ընթացք և 30-օրյա ժամկետում դրա վերաբերյալ կազմել վարչական ակտ: «ԿԱ ՊԵԿ-ի և Արաբկիրի ՀՏ կողմից մինչ օրս նշված դիմումին որևէ ընթացք չի տրվել:

Գտնում ենք, որ «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ կողմից դրևորված գործողությունն ըստ էության անգործություն է, որի հիմքով ընկերությունը խնդրում է ընկերության 18.04.2013 թ-ի

դիմումով ներկայացված պահանջին տալ ընթացք և պարտավորեցնել Արաբկիրի ՀՏ-ին ընկերության անձնական հաշվի քարտից դուրս գրել անհիմն հաշվառված 422.614 դրամ տույժի գումարը:

«ՀԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Արաբկիրի ՀՏ ներկայացուցչի ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

«ԷՖ Հինգ» ՍՊԸ դիմում-գանգատով բերված պահանջի, այն է՝ ընկերության 18.04.2013 թ-ի դիմումով ներկայացված պահանջին ընթացք տալու վերաբերյալ, նշվեց հետևյալը:

«ՀԱ ՊԵԿ նախագահին, ինչպես նաև Արաբկիրի ՀՏ պետին հասցեագրված 18.04.2013 թ-ի դիմումով «ԷՖ Հինգ» ՍՊԸ-ն խնդրել է կատարել «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջը և ընկերության հաշվառման քարտերից դուրս գրել զիջվող 422.614 դրամ գումարը:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «ԷՖ Հինգ» ՍՊԸ 18.04.2013 թ-ի դիմումին պատասխանվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 29.05.2013 թ-ի թիվ 3393 գրությամբ, որով ընկերության պահանջը մերժվել է:

Հանձնաժողովն արձանագրեց, որ, իրոք, ընկերության 18.04.2013 թ-ի դիմումին պատասխանվել է սահմանված ժամկետի խախտմամբ:

Ինչ վերաբերվում է դիմում-գանգատով բերված հաջորդ պահանջին, այն է՝ պարտավորեցնել Արաբկիրի ՀՏ-ին ընկերության անձնական հաշվի քարտից դուրս գրել անհիմն հաշվառված 422.614 դրամ տույժի գումարը, ապա այս կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

«ՀԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 29.05.2013 թ-ի թիվ 3393 գրությամբ խնդրո առարկա հարցի վերաբերյալ ընկերությանը տրվել է հստակ պատասխան, որը, Հանձնաժողովի համոզմամբ, բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 22.07.2011 թ-ի թիվ 1000789 հանձնարարագրի «ԷՖ Հինգ» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Արդյունքում 20.08.2011 թ-ին կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ թիվ 1000789 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1.153.140 դրամ: Ստուգման ակտով շահութահարկի գծով առաջադրված պարտավորության չափը կազմել է ընդամենը 1.069.584 դրամ (90% 954270 դրամ, 10% 115314 դրամ): Ստուգման ակտով լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել նաև ԱԱՀ-ի և դրամարկղային գործառնությունների գծով, համապատասխանաբար՝ 42.840 դրամ (90% 38556 դրամ, 10% 4284 դրամ) և 50.000 դրամ (90% 45.000 դրամ, 10% 5000 դրամ): Շահութահարկի գծով առաջադրված պարտավորության 90%-ը, որն արձանագրվել է 2008, 2009 և 2010 թվականներին կատարված խախտումների համար, մարվել է շահութահարկի գծով 2010 և 2011 թվականներին կատարված վճարումներից առաջացած գերավճարի գումարներից: Այսինքն, ստուգման ակտով շահութահարկի գծով առաջադրված պարտավորության 90%-ը մարվել է մինչև 04.07.2011 թվականն առաջացած գերավճարի գումարներից: Մնացած պարտավորությունների համար, համաձայն ընկերության 20.08.2011 թ-ի դիմումի, ընկերության և Արաբկիրի ՀՏ միջև կնքվել է ժամանակացույց:

Ընկերության կողմից ապառքների մարման հետևանքով «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կատարվել է տույժերի և տուգանքների գծով արտոնության կիրառում: Ընդ որում հարկ է նշել, որ հիշատակված օրենքով նախատեսված արտոնությունները տարածվում են 2009 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող և կամ դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով առկա օրենքով նախատեսված հարկային պարտավորությունների վրա:

Հաշվի առնելով վերոգրյալն արտոնվել է ժամանակացույցով նախատեսված տույժի և տուգանքի գումարները, համապատասխանաբար՝ 30100 դրամի և 32832 դրամի չափով:

Հարկ է նշել, որ <Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին> ՀՀ օրենքի համաձայն, հարկ վճարողները կարող են մինչև 2011 թվականի օգոստոսի 20-ը դիմել իրենց հաշվառման վայրի հարկային մարմին՝ նույն օրենքին համապատասխան հարկային պարտավորությունների մարման ժամանակացույց հաստատելու համար:

Քննարկվող դեպքում ընկերության դիմումի հիման վրա սահմանված ժամկետում կնքվել է ժամանակացույց, որով նախատեսված տույժերն ու տուգանքներն արտոնվել են:

Հանձնաժողովի 18.06.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն <Էֆ Հինգ> ՍՊԸ 29.05.2013 թ-ի դիմում-գանգատը մերժվել է:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, դիմում-գանգատը և գանգատին առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

<Էֆ Հինգ> ՍՊԸ 29.05.2013 թ-ի դիմում-գանգատը մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ